

**SUPERIOR COURT OF CALIFORNIA, COUNTY OF LOS ANGELES
JUVENILE COURT**

**Կալիֆորնիայի Առաջին ատյանի դատարան, Լոս Անջելես քաունթի,
Անչափահասների հարցերով դատարան
Խորհրդատվություն իրավունքների մասին, երբ Դատարանը Բարեկեցության և
հաստատությունների օրենսգրքի (Welfare and Institutions Code) բաժին 366.26-ի
ներքո լսման հրաման է տալիս Կալիֆորնիայի Դատարանի կանոնագիրք (California
Rules of Court), Կանոն 5.590**

Ըստ Բարեկեցության և հաստատությունների օրենսգրքի (WIC) բաժին 366.26-ի, Ձեզ ու Ձեր երեխային վերաբերող գործով լսում է նշանակվել: Բաժին 366.26-ի վերնագիրն է. «Ծնողական իրավունքների դադարեցման, կամ դատարանի խնամքին հանձնված երեխաների նկատմամբ խնամակալության հաստատման վերաբերյալ լսումներ»:

Ձեզ խորհուրդ է տրվում առ այն, որ եթե ցանկանում եք պահպանել ընտանիքի վերամիավորման դադարեցման և բաժին 366.26 -ի ներքո լսում նշանակելու մասին հրամանը բողոքարկելու՝ Ձեր իրավունքը, ապա պարտավոր եք արտակարգ կարգադրություն հայցել՝ ներկայացնելով *Կարգադրության խնդրագիր ներկայացնելու մտադրության մասին ծանուցագիր և Արձանագրության տրամադրման մասին դիմում (Notice of Intent to File a Writ Petition and Request for Record)* (Cal. Rules of Ct., rule 8.450) (Ձև JV-820) և Արտակարգ կարգադրության մասին խնդրագիր (Petition for Extraordinary Writ) (Cal. Rules of Ct., rules 8.452 & 8.456) (Ձև JV-825), կամ արտակարգ կարգադրության մեկ այլ խնդրագիր: (Cal. Rules of Ct., rule 5.590(b).)

Կարգադրության խնդրագիր ներկայացնելու մտադրության մասին ծանուցագիրն ու Արձանագրության տրամադրման մասին դիմումը (Ձև JV-820) պետք է ներկայացնել Դատարանի քարտուղարություն բաժին 366.26 -ի ներքո լսում նշանակելու մասին հրամանը հրապարակելու օրից հետո 7 օրվա ընթացքում, կամ, եթե հրամանը տրվել է այնպիսի հաշտարարի կողմից, ով ժամանակավոր դատավորի կարգավիճակով չի հանդես եկել, ապա կանոն 5.540 -ի ներքո հաշտարարի որոշումը վերջնական դառնալուց հետո յոթ օրվա ընթացքում: Լսումն նշանակող հրամանի ամսաթիվն այն ամսաթիվն է, երբ դատարանը հրապարակում է հրամանն արձանագրության մեջ՝ բանավոր, կամ գրավոր, որ իրադարձությունը որ ավելի վաղ վրա հասնի: Դատարան ներկայացնելու ժամկետը 5 օրով երկարաձգվում է, եթե այս ծանուցագիրը փոստով եք ստացել: Վերոհիշյալ Ձերը կցվում են (եթե առաքումը փոստով է) ըստ Կալիֆորնիայի Դատարանի մասին կանոնագրի կանոն 5.590(b)-ի: Եթե ցանկանում եք վիճարկել բաժին 366.26 -ի ներքո Ձեր գործով լսում նշանակող հրամանը ապա երկու Ձևն էլ անհրաժեշտ է ներկայացնել՝ ստորև նշված կարգով:

**SUPERIOR COURT OF CALIFORNIA, COUNTY OF LOS ANGELES
JUVENILE COURT**

Կարգադրության խնդրագիր ներկայացնելու մտադրության մասին Ճանուցագրի ու Արձանագրության տրամադրման մասին դիմումի Ձևը (JV-820), կամ կարգադրության մեկ այլ խնդրագիր ներկայացնելու մտադրության մասին ծանուցագրի և արձանագրության տրամադրման մասին խնդրանքն անհրաժեշտ է ներկայացնել Դատարանի քարտուղարություն, հետևյալ հասցեով. Edmund D. Edelman Children’s Courthouse, 201 Centre Plaza Drive, Monterey Park, California, 91754, Room 2700: Դատարանի քարտուղարության Բողոքարկման հարցերով բաժնի հեռախոսահամարը՝ (323) 307-8098: Կարգադրության խնդրագիր ներկայացնելու մտադրության մասին ծանուցագիրը պետք է ներառի այն լսման բոլոր հայտնի ամսաթվերը, որի արդյունքում ընդունվել է 366.26 բաժնի ներքո լսումն նշանակելու մասին հրամանը:

Կարգադրության խնդրագիր – Անչափահասների համար նախատեսված Ձևը (JV-825), կամ արտակարգ կարգադրության մասին որևէ այլ խնդրագիր անհրաժեշտ է ներկայացնել անմիջականորեն հարցը լսող դատարան՝ Court of Appeals, 300 South Spring Street, Los Angeles, California 90013 հասցեով, Հյուսիսային աշտարակի երկրորդ հարկ: Վերաքննիչ դատարանի հեռախոսահամարը՝ (213) 830-7000:

ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ. Կարգադրության խնդրագիր չներկայացնելու դեպքում կարող եք կորցնել WIC-ի բաժին 366. 26-ի ներքո գումարված լսման ընթացքում ընդունված որոշումը բողոքարկելու՝ Ձեր իրավունքը: Թեև կարող եք կարգադրության խնդրագիր ներկայացնել ինքներդ, սակայն խորհուրդ ենք տալիս նախքան Դատարան որևէ բան ներկայացնելը խորհրդակցել փաստաբանի հետ: